ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ **ԵԴ2/3843/02/24**
2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«09» հուլիսի 2025թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
զեկուցող Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ
Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ս. ՄԵՂՐՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Վ. ՔՈՉԱՐՅԱՆ

քննարկելով ըստ Շուշանիկ Հովհաննիսյանի և Սիմոն Գումրիկյանի հայցի ընդդեմ «Յու–Մետ էքսպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն), երրորդ անձ «Ռեկոնստրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ ի դեմս սնանկության գործով կառավարիչ Զավեն Վարդանյանի՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, թիվ ԵԴ2/3843/02/24 քաղաքացիական գործի ենթակայության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Դիմելով դատարան՝ Շուշանիկ Հովհաննիսյանը և Սիմոն Գումրիկյանը պահանջել են Ընկերության, Կազմակերպության և իրենց միջև 17.04.2024 թվականին կնքված պահանջի զիջման (ցեսիայի) պայմանագրի նկատմամբ կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ և պարտավորեցնել կողմերին միմյանց վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, այն է՝ Ընկերությանը պարտավորեցնել իրենց վերադարձնել 10.000.000 ՀՀ դրամ վճարված գումարը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 31.05.2024 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Մ. Ստեփանյանը 22.05.2025 թվականին որոշում է կայացրել սույն քաղաքացիական գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին՝ պատճառաբանելով, որ.

«Այսինքն՝ ըստ էության սնանկ ճանաչված ընկերությունն ունեցել է ենթադրյալ պահանջի իրավունք Համահայցվորների նկատմամբ, որը զիջել է սնանկ ճանաչված լինելու պայմաններում, իսկ այն գումարը, որը ենթադրաբար պետք է ստանար «Ռեկոնստրաքշն» ՍՊԸ-ն, ստացել է այլ անձ, հետևաբար հայցի առարկայի հիմքը և դրանով հայցի հնարավոր բավարարման դեպքում գումարը պահանջելու իրավունքը ենթադրաբար պատկանել է սնանկ ճանաչված ընկերությանը: Հետևաբար առկա է պարտապանի գույքի կազմում ներառված գույք՝ սույն դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածով սահմանված գույքային իրավունք, որը կարող է սնանկության վարույթի շրջանակում հանգեցնել պարտապանի պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությանը, ուստի Դատարանն արձանագրում է, որ առկա են «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված անհրաժեշտ պայմանները գործի քննությունը ՀՀ սնանկության դատարանին հանձնելու համար»:

Գործն ստացվել է Սնանկության դատարանում և 20.06.2025 թվականին հանձնվել է նույն դատարանի դատավոր Լ. Հարությունյանին:

Սնանկության դատարանի դատավոր Լ. Հարությունյանը, համաձայն չլինելով գործի ենթակայությանը, 27.06.2025 թվականին որոշում է կայացրել գործի ենթակայությունը որոշելու համար թիվ ԵԴ2/3843/02/24 քաղաքացիական գործը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին այն պատճառաբանությամբ, որ.

«Մինչդեռ Դատարանը հարկ է համարում նշել, որ սույն հայցի ենթադրյալ բավարարման դեպքում վիճարկվող գործարքի արդյունքում «Յու-Մետ էքսպորտ» ՍՊԸ-ին 10.000.000 ՀՀ դրամ վճարված գումարը ենթակա է վերադարձման ոչ թե «Ռեկոնստրաքշն» ՍՊԸ-ին, այլ՝ գումարը վճարած անձանց, սույն գործով համահայցվորներ՝ Սիմոն Ջորջի Գումրիկյանին և Շուշանիկ Գառնիկի Հովհաննիսյանին: Այսինքն, նշված գումարը, հայցի հնարավոր բավարարման դեպքում ենթակա չէ փոխանցման «Ռեկոնստրաքշն» ՍՊԸ-ի սնանկության հատուկ հաշվին:

Նման պայմաններում, Դատարանը հանգում է այն հետևության, որ վերը նշված 10.000.000 ՀՀ դրամ գումարի նկատմամբ սնանկ ճանաչված ընկերության ենթադրյալ պահանջի իրավունք ունենալը, ինքնին հիմք չէ, նշված գումարը սնանկ ճանաչված անձի գույքի կազմում ներառված համարելու համար, նկատի ունենալով ինչպես սույն գործով հայցի առարկան, այնպես էլ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված և սնանկության կառավարչին վերապահված՝ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի հավաքագրմանն ուղղված լիազորությունները (օր.՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդված և այլն)»:

Թիվ ԵԴ/33054/02/21 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել և դատական կազմին է հանձնվել 18.03.2025 թվականին:

Վճռաբեկ դատարանը, քննելով թիվ ԵԴ2/3843/02/24 քաղաքացիական գործի ենթակայության հարցը, արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ տարածքային ընդդատության կամ սնանկության դատարանից ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված դեպքերում դատավորը ենթակայության հարցի որոշման համար գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին կայացված որոշումը ուղարկում է գործին մասնակցող անձանց, որոնք այն ստանալու պահից եռօրյա ժամկետում կարող են գործի ենթակայության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

Վկայակոչված նորմերից հետևում է, որ գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը համաձայն չլինելու դեպքում յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ ուղարկելու մասին՝ այդ որոշումն ուղարկելով գործին մասնակցող անձանց, որոնք այն ստանալու պահից՝ եռօրյա ժամկետում, կարող են գործի ենթակայության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը գործն ստանալու պահից՝ հնգօրյա ժամկետում, որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (...):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր): (...):

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանից քաղաքացիական գործ ստանալու դեպքում դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի

նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ենթակայությունը: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիաիրավական վեճը սնանկության գործը վարող դատավորի կողմից նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործ ենթակա է քննության միայն հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1. քաղաքացիական գործով վեճը պետք է ծագած լինի՝

ա) կամ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների վերաբերյալ,

բ) կամ երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի վերաբերյալ,

գ) կամ պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ, անկախ պարտապանի սնանկ ճանաչված լինելու հանգամանքից, բացառությամբ սնանկության գործով կառավարչի կողմից ներկայացվող հայցերից կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերից:

2. նշված յուրաքանչյուր դեպքում քաղաքացիական գործով ծագած վեճը պետք է ազդեցություն ունենա սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի համաձայն՝

1. Գործարքն անվավեր է սույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

2. Վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու պահանջը կարող են ներկայացնել սույն օրենսգրքում նշված անձինք:

3. Առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին պահանջ կարող է ներկայացնել ցանկացած շահագրգիռ անձ: Դատարանն իրավունք ունի այդպիսի հետևանքներ կիրառել սեփական նախաձեռնությամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ ցանկացած քաղաքացիաիրավական գործարք կարող է դրա մասնակիցների համար առաջացնել ցանկալի իրավական հետևանքներ, եթե այն վավեր է, այսինքն՝ համապատասխանում է օրենքից բխող որոշակի պահանջների ու պայմանների: Այն դեպքում, երբ գործարքը չի համապատասխանում այդ պահանջներին, ապա այն համարվում է անվավեր կա՛մ օրենքով սահմանված հիմքերով դատարանի կողմից անվավեր ճանաչվելու դեպքում (վիճահարույց գործարք), կա՛մ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք) *(տե՛ս Վահագն Կապլանյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության և ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ԼԴ/0435/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.12.2015 թվականի որոշումը)*:

Մեկ այլ գործով ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը թե՛ վիճահարույց, և թե՛ առոչինչ գործարքների համար նախատեսել է անվավերության միևնույն իրավական

հետևանքները, այն է՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից *(տե՛ս Սեդրակ Բարսեղյանն ընդդեմ Գագիկ Բարսեղյանի և Կարինե Բաղդասարյանի թիվ ԱՐԱԴ2/0077/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.04.2022 թվականի որոշումը)*:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու հարցում դատարանը սահմանափակած չէ շահագրգիռ անձի ներկայացրած պահանջով, քանի որ վերջինս իր սեփական նախաձեռնությամբ ևս կարող է դրանք կիրառել:

Տվյալ դեպքում Կազմակերպությունը ճանաչվել է սնանկ Սնանկության դատարանի 16.04.2025 թվականի վճռով: Ընկերության, Կազմակերպության և Շուշանիկ Հովհաննիսյանի ու Սիմոն Գումրիկյանի միջև 17.04.2025 թվականի պահանջի զիջման (ցեսիայի) պայմանագրով Կազմակերպության, Շուշանիկ Հովհաննիսյանի ու Սիմոն Գումրիկյանի միջև 16.02.2024 թվականին կնքված կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի առուվաճառքի պայմանագրի հիման վրա վերջիններիս հանդեպ Կազմակերպության ունեցած 20.000.000 ՀՀ դրամի պահանջի իրավունքը զիջվել է Ընկերությանը:

Հայցադիմումում նշված փաստերի համաձայն՝ պայմանագրի կնքման օրը, ի կատարումն 16.04.2025 թվականին կնքված պահանջի զիջման (ցեսիայի) պայմանագրի, Շուշանիկ Հովհաննիսյանն ու Սիմոն Գումրիկյանն Ընկերությանը փոխանցել են 10.000.000 ՀՀ դրամ, իսկ սույն քաղաքացիական գործի շրջանակում որպես վերը նշված առոչինչ գործարքի անվավերության հետևանք պահանջել են Ընկերությանը պարտավորեցնել իրենց վերադարձնել 10.000.000 ՀՀ դրամ վճարված գումարը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև սույն քաղաքացիական գործի շրջանակում հայցվորների պահանջը վերաբերում է առոչինչ գործարքի անվավերության հետևանք կիրառելուն՝ Ընկերությանն իրենց վճարած 10.000.000 ՀՀ դրամը վերադարձնելուն, սակայն դատարանն իր նախաձեռնությամբ կարող է կիրառել նաև այդ առոչինչ պայմանագրի անվավերության մյուս հետևանքները, որի արդյունքում հնարավոր է նաև վերականգնվի 16.02.2024 թվականին կնքված կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի առուվաճառքի պայմանագրի հիման վրա Կազմակերպության 20.000.000 ՀՀ դրամի պահանջի իրավունքը Շուշանիկ Հովհաննիսյանի ու Սիմոն Գումրիկյանի նկատմամբ: Հետևաբար տվյալ դեպքում առկա են սնանկության գործը վարող դատավորի կողմից նույն սնանկության գործի շրջանակում առանձին քաղաքացիական գործերը քննելու անհրաժեշտ երկու պայմանները՝ քաղաքացիական գործով վեճը ծագել է սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների վերաբերյալ ու այն ազդեցություն ունի պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ2/3843/02/24 քաղաքացիական գործն ըստ Շուշանիկ Հովհաննիսյանի և Սիմոն Գումրիկյանի հայցի ընդդեմ «Յու–Մետ էքսպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, երրորդ անձ «Ռեկոնստրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ ի դեմս սնանկության գործով կառավարիչ Զավեն Վարդանյանի՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, ենթակա է Սնանկության դատարանի քննությանը:

Վերոգրյալի հաշվառմամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ ԵԴ2/3843/02/24 քաղաքացիական գործն ըստ Շուշանիկ Հովհաննիսյանի և Սիմոն Գումրիկյանի հայցի ընդդեմ «Յու–Մետ էքսպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, երրորդ անձ «Ռեկոնստրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ ի դեմս սնանկության գործով կառավարիչ Զավեն Վարդանյանի՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, ենթակա է Սնանկության դատարանի քննությանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող ***Գ. ՀԱԿՈԲՅԱՆ***

Զեկուցող ***Ա. ՄԿՐՏՉՅԱՆ***

Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ

Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ս. ՄԵՂՐՅԱՆ

Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

Վ. ՔՈՉԱՐՅԱՆ